ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 03/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 13 մարտի 2023թ.

2023 թվականի մարտի 13-ին, ժամը 13:30-ին, Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման և դրանց վերաբերյալ եզրակացություններ տալու նպատակով նպատակով ստեղծված սոցիալական, առողջապահության, բնության պահպանության հարցերի մշտական գործող հանձնաժողովի նիստ: Նիստին ներկա էին նախագահ Էդիկ Պիճիկյանը, անդամներ Կարապետ Հարությունյանը, Վարդան Սուքիասյանը, աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը, աշխատակազմի գլխավոր մասնագետ Մարատ Պետրոսյանը, Հանձնաժողովի աշխատանքներին աջակցող, համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Զարուհի Ապրեսյանը: Բացակա էին հանձնաժողովի անդամներ Վլադիրմիր Վարդևանյանը, Ավագ Սահակյանը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը՝

1.«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի N 13-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»,

2.«Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին»:

Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը ներկայացրեց, որ օրակարգի առաջին հարցը՝ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի N 13-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» կազմվել է՝*** համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի՝ ***նորմատիվ իրավական ակտերում փոփոխություն կամ լրացում կատարում է միայն այդ նորմատիվ իրավական ակտն ընդունած մարմինը կամ նրա իրավահաջորդը,*** ավագանին որոշում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում աղբահանության աշխատանքների իրականացման կարգը, աղբահանության

պայմանագրերի ձևերը և համայնքի սանիտարական մաքրման սխեման հաստատելու մասին N 13-Ն որոշման N01 (Բյուրեղավան համայնքում աղբահանության աշխատանքների իրականացման կարգը), N03 (Բյուրեղավան համայնքում աղբամանների տեղադրման վայրերը, դրանց տեսակները և քանակը) և N 06 (Բյուրեղավան համայնքի սանիտարական մաքրման սխեման) հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1, 2 և 3 հավելվածների:

Բյուրեղավան համայնքում աղբահանության աշխատանքների իրականացման կարգում ավելացել է նոր գլուխ՝ Աղբի հավաքման և փոխադրման պայմանները և կարգը:

Բյուրեղավան համայնքի բնակավայրերում ավելացել են աղբամանների տեղադրման վայրեր՝ Բյուրեղավան քաղաքի 25 շենքի մոտ, Հավերժության պուրակում, Քաղաքային գերեզմանատանը, Նուռնուս բնակավայրում՝ Ամառանոցային փողոցում, և Ջրաբեր բնակավայրում՝ Երևան-Սևան մայրուղի 23-26 կմ աջ և ձախ կողմերում, որն էլ հիմք է հանդիսացել Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի N 13-Ն որոշման N 03 հավելվածում փոփոխություն կատարելու համար:

Բյուրեղավան համայնքի սանիտարական մաքրման սխեմայում փոփոխություն կատարելը պայմանավորված է մաքրման ենթակա Բյուրեղավան քաղաքում նորակառույց քաղաքային այգու տարածքը սխեմայում ներառելու անհրաժեշտությամբ:

Որոշվեց՝

1. հավանություն տալ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի N 13-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Ձեռնպահ – 0 Դեմ- 0

Էդիկ Պիճիկյան

Կարապետ Հարությունյան

Վարդան Սուքիասյան

«Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» օրակարգի երկրորդ հարցը ներկայացրեց Մարատ Պետրոսյանը: Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Նուռնուս գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող 07-051-0315-0005 կադաստրային ծածկագրով 0.31654 հեկտարից 0.15 հեկտար և 07-051-0315-0004 կադաստրային ծածկագրով 0.02346 հեկտար գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական

նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը փոխել բնակավայրերի հողերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողերի:

Սույն որոշման նախագիծը կազմվել է համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ (***Համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով որոշում է ընդունում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, դրանց փոփոխությունները, ինչպես նաև նախագծման առաջադրանքները հաստատելու մասին՝ «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով.***) կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14[3]-րդ (***Քաղաքաշինական գործունեության կանոնակարգումը համայնքի վարչական սահմաններում***) և 30-րդ (***2. Մինչև համայնքների գլխավոր հատակագծերի հաստատումը համայնքի վարչական տարածքում հողերի նպատակային նշանակության փոփոխությունները հաստատում է համայնքի ավագանին՝ Կառավարության սահմանած կարգով հատուկ այդ նպատակով ստեղծված ժամանակավոր միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության առկայության դեպքում:)*** հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի N 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի փետրվարի 22-ի N 19 եզրակացությունը:

Որոշվեց՝

2. հավանություն տալ ***«Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Ձեռնպահ – 0 Դեմ- 0

Էդիկ Պիճիկյան

Կարապետ Հարությունյան

Վարդան Սուքիասյան

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Էդիկ Պիճիկյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Կարապետ Հարությունյան